



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

17 մարտի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի  
Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի  
Ա. Թունյանի

Քննության առնելով Վոլոդյա Կարապետյանի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. Վոլոդյա Կարապետյանը 27.02.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝  
խնդրելով՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 19, 33 և 54-րդ հոդվածները  
ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Դիմողը նաև միջնորդություն է ներկայացրել պետական տուրքի վճարումից իրեն  
ագատելու վերաբերյալ:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմերը, ՀՀ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների  
որոշումներով տրված մեկնաբանության շրջանակներում, սույն գործի լուծման ընթացքում

հանգեցրել են սահմանադրական նորմերով նախատեսված իր սահմանադրական իրավունքների սահմանափակմանը:

Ըստ դիմողի՝ «ՀՀ վերաքննիչ և վճռաբեկ դատարանները միակողմանի են դիտարկել և գնահատել գործում առկա փաստերը, մասնավորապես չեն գնահատել համապատասխան մարմնի ատեստավորման վերաբերյալ կատարված արարքի /դրսևորած գործողությունն ու անգործություն/ իրավաչափությունը»:

Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմերին հղում կատարելով՝ ՀՀ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից իրավական նորմերի ոչ բավարար չափով մեկնաբանության և դրանց կիրառման արդյունքում խախտվել են ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքը, 61-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքը և ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի իրավական տարրի սկզբունքը:

3. Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա նյութերը՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը պարզեց.

Գործի դատավարական նախապատմությունը ցույց է տալիս, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանի 2006 թվականի փետրվարի 7-ի վճռով բավարարվել է քաղաքացիական գործն ըստ հայցի Վոլոդյա Կարապետյանի ընդդեմ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության՝ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը պատասխանողից բռնագանձելու պահանջի մասին:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանի 07.02.2006թ. կայացրած վճռի դեմ պատասխանող ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ներկայացուցիչ Ա.Մելիքսեթյանի կողմից բերվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ դատարանը 2006 թվականի ապրիլի 19-ի վճռով վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Վոլոդյա Կարապետյանի հայցն ընդդեմ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության՝ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ

Ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի բռնագանձման պահանջի մասին՝ մերժել է: ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 2-ի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վ. Կարապետյանը ՀՀ վերաքննիչ դատարանի 2006 թվականի ապրիլի 19-ի վճիռի դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հունիսի 2-ի որոշմամբ թողնվել է առանց բավարարման, իսկ ՀՀ վերաքննիչ դատարանի 2006 թվականի ապրիլի 19-ի վճիռը՝ անփոփոխ: ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հունիսի 2-ի որոշումից հետո շուրջ 11 տարի անց դիմողը կրկին անգամ վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ պահանջելով նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հունիսի 2-ի որոշումը, բեկանել ՀՀ վերաքննիչ դատարանի 2006 թվականի ապրիլի 19-ի վճիռը և օրինական ուժ տալ առաջին աստիճանի դատարանի 2006 թվականի փետրվարի 7-ի վճիռին:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2016 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ արձանագրել է, որ «... բողոք բերող անձը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 02.06.2006 թվականի որոշումը վերանայելու համար որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչել է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի «ա» ենթակետը վեճի լուծման ժամանակ չկիրառելու հանգամանքը»: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «...բողոք բերած անձի հիմնավորումը՝ նոր երևան եկած հանգամանքի առկայության մասին, անհիմն է, քանի որ բողոք բերած անձը չի ապացուցել և հիմնավորել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի որևէ կետով սահմանված նոր երևան եկած հանգամանքի առկայությունը»:

Քանի որ դիմողի կողմից վիճարկվող դրույթներից ոչ մեկը չի վերաբերում վճռաբեկ վարույթի շրջանակներում նոր երևան եկած հանգամանքներին, դիմողը բաց է թողել ՀՀ սահմանադրական դատարանի դիմելու համար նախատեսված 6-ամսյա ժամկետը, որը նրա համար սկսել է հոսել ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հունիսի 2-ի որոշումը հասանելի լինելու պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

Վոլոդյա Կարապետյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

17 մարտի 2017 թվականի  
ՍԴԴԿՈ/1-6